ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» դեկտեմբերի 2023թ. № 1189

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԵՂԻՇԵ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԱՐԾՎԻԿ ԱՂԱՍՈՒ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՀԱՅԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով, որ Եղիշե Սանասարի Սարգսյանին, Արծվիկ Աղասու Սիմոնյանին և Տիգրան Հայկի Սարգսյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքում գտնվող, 06-006-0304-0041 կադաստրային ծածկագրով 0,09000 հեկտար մակերեսով հողամասի վրա 2018 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով 2023 թվականի հոկտեմբերի 9-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (գրանցված է սեղանամատյանում N 2839, 2840, 2841),

«ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023ZNUHVF, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Եղիշե Սանասարի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Եղիշե Սանասարի Սարգսյանին (ծնված՝ 10.04.1940թ), Արծվիկ Աղասու Սիմոնյանին (ծնված՝ 20.09.1943թ) և Տիգրան Հայկի Սարգսյանին (ծնված՝ 19.11.2007թ) ժառանգաբար փոխանցված՝ «Լոռու մարզ ք. Սպիտակ Թումանյան փողոցի թիվ 19/1 բնակելի տուն» հասցեում գտնվող, 06-006-0304-0041 կադաստրային ծածկագրով 0,09000 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 79,50 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Եղիշե Սանասարի Սարգսյանի, Արծվիկ Աղասու Սիմոնյանի և Տիգրան Հայկի Սարգսյանի սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Եղիշե Սանասարի Սարգսյանին, Արծվիկ Աղասու Սիմոնյանին և Տիգրան Հայկի Սարգսյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 132 665 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 1

ք.Սպիտակ